բարց, որոց բաղումք արդէն քանիցս իւրեանց ունեցածները հրդեհից զոհ տալով, այս անգամ իւրեանց սիրելիները և ընտանիքները և բարեկամները ևս կորուսին. ամէն Հայ իւր աչքին առջև ներկայացնէ՛ այն աղետալի տեսարանը, ու տեսնայ որ իւր հայրենիքի եղբարց ոմանք բոցակիզուած, ոմանք կալախառն թանձրամած և բոցարորբոք ծուխէն հեղձամղձուկ, ոմանք փլատակաց ներքև և ջրշեղ ջի ջրոց մէջ թաղուած վախճանեցան ։ Իսկ որք կենդանի մնացին, մերկ և կողոպուտ յամենայնէ նստեալ 'ի վերայ մոխրոյ՝ և անըմբերելի արտասուաց և դառն ողբոց մէջ ընկղմած, ո՜հ՛ մի՞թէ մարդկային սըրտերը կը հանդուրժեն և անտարբեր կարեն մնալ այսպիսի՛ ցաւալի և բազմաղետ վըտանգելոց վիճակաց. յիշե՛նք՝ զի հրկիզելոց մեծ մասը մեր սիրելի՛ համարիւն և համասեռ եղբարքն են ։ Մինչդեռ այլազգիք անգամ մարդասիրաբար զանազան նպաստներով և միջոցներով կը ջանան մխիթարել այն դժբաղդները, մի՞թէ կարելի է յուսալ՝ զի մեր Ռուսաստանաբնակ առատասիրտ բարեգութ և ողորմած եղբարք և ազգակիցք անտարբեր աչօք նկատեն Վեհ. Կաթողիկոսի հրաւէրները իւրեանց դժբաղդ և բազմօք վտանգեալ եղբարց դրամական օժանդակութիւն շնորհելոյ աղագաւ ։ Մեք անշո՛ւշտ եմք, զի եղբարք մեր որ 'ի Ռուսիա և ազգակիցք՝ ամենայն սիրով ընդունած Նորին Ս. Օծութեան հրաւէրները և յորդորները, պիտի սիրեն փութալ մի քան զմի առաւել բարի նախանձով լցեալ՝ կարեկցութեան և եղբայրսիրութեան սուրբ զգացմամբք և գեղեցիկ առաքինութեամբք վառուած՝ ըստ կարեաց օգնել և նպաստել այն Խներաբնակ բազմաղետ և թշուառ ազգայնոցս. և այսպիսի՛ բարեգործութեամբք բազմաթիւ գերդաստաններ պիտի ազատուին թշուառութեան դառն կեանքերէն, և պիտի մխիթարուին նոքա ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Ի ժամանակին՝ օժանդակողաց անուանք հանդերձ քանակութեամբք նպաստից պիտի հրատարակուին ամսագրոյս միջոցաւ ։

---

## ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ
### Ս. ԱԹՈՌՈՅՍ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

Ամսոյս 7 էն սկսեալ ց20ն՝ Մայր Աթոռոյս ժառանգաւորաց ուսումնարանի աշակերտաց տարեկան հարցաքննութեան հանդէսը կատարուեցաւ 'ի ներկայութեան Գեր. Արքեպիսկոպոսաց՝ Արժ. Վարդապետաց և Միաբանից։

Ըստ բաւականին յաջող էին աշակերտաց պատասխանները դաս տուեալ զանազան առարկայից մէջ, և միանգամայն քննչաց գոհունակութեանց արժանի։

---

## ՕՐԻՈՐԴԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ
### Ի ՇԱՄԱԽԻ.

Գեր. Անդրէաս Արք եպիսկոպոս հոգևոր–Տեսուչն Շամախւոյ՝ ըստ ուսումնասէր և բարենպատակ զգացմանցն՝ նոյն քաղաքին Մերազնէից Օրիորդաց Վարժարանի համար ունեցած անհրաժեշտ կարօտութիւնը տեսանելով, ամեն ջանք 'ի գործ կը դնէ և ըստ բաղձանաց և ըստ բարձր հրամանի Վեհափառ Կաթուղիկոսի՝ կը յաջողի հաստատել Օրիորդաց Վարժարան։ Շամախաբնակ մերազ-

նեայ եռանդուն ժողովուրդը ընդ այս Ազգասիրական ձեռնարկութիւն սիրելի Հոգևոր—Տեսչին իւրեանց՝ մեծ համակրութեամբ և բարի զգացմամբք ուրախանալով, կը փութան 5 յօդուածէ բաղկացեալ կանոնադրութեամբ մի ընկերութիւն կազմել, որոյ անդամք առայժմ հնգետասան անձինք են, և կը խնդրեն Օրիորդաց վարժարանի տնտեսական կառավարութիւնը ստանձնել ընկերութեան հոգացողութեան 'ի ներքոյ։

Ուստի Գեր. Անդրէաս Արք. Եպիսկոպոս՝ 55 համարաւ յայտարարութեամբն ներկայացնելով առ Վ. Վեհ. Կաթողիկոս՝ նոյն ընկերութեան խնդիրը և Կանոնադրութիւնը, Նորին Ս. Օծութիւնը բարեհաճեցաւ Օրհնութեան Կոնդակաւ հաստատել նոյն ընկերութիւնը և կանոնադրութիւնը՝ յորդորելով միանգամայն՝ կարելի ամեն ջանքը և հընարքը չը խնայել նոյն նորահաստատ վարժարանի Տնտեսական բարւոք կառավարութեան և յառաջադիմութեան եւ արդիւնաւէտութեան համար. որպէս զի յապագային կրթեալ և բարեզգաց օրիորդներ ստանալով նոյն վարժարանէն, ունենան նաև նոր սերունդին բարոյական երջանկութիւն և եռանդուն նպատակ հաղորդող մայրեր։

Առ այժմ նոյն վարժարանին մէջ կայ 40 աշակերտուհիք գտանուիլը և նոցա կրթութիւն ստանալը Գեր. Հոգևոր–Տեսչի յայտարարութենէն կիմանամք. և դաս տրուած առարկայքն են՝ Հայ. ընթերցանութիւն և Քրիստ. վարդապետութեան սկզբնական ուսանելիքը։

Այս առթիւ նաև կը յաւելումք հաղորդել, զի ըստ հրամանի Վ. Վեհ. Կաթողիկոսի՝ Նորին Գերապատուութիւնը իւր վիճակին Լաւհիճու գաւառակի Ղալակիայ և Գիրք գիւղօրէից մէջ ազգ. մանկտեաց դաստիարակութեան համար ժողովրդական Հոգևոր դպրոցներ հաստատած է, և արդէն դասատուութիւնքը կը շարունակուին։

Սիրելի է մեզ այսու բարեպատեհ առթիւ մեր խորին շնորհակալութիւնքը յայտնելէն զկնի առ Գեր. Անդրէաս Արք. Եպիսկոպոս՝ իւր ուսումնասէր և ազգասէր ջանից և գործունէութեան համար, բարեմաղթել՝ որ Նորին Գերապատուութիւնը իւր վիճակին ջերմեռանդն ժողովրդեան հետ գեղեցիկ և փոխադարձ համակրութեամբք և սիրով աջակցած՝ յաջողի ոչ միայն ժողովրդ. Հոգև. դպրոցներ հաստատել ամեն կողմ և գիւղօրէից մէջ, այլ գլխաւորապէս արդէն հաստատեալները դարուս և Ազգիս ներկայ դրութեան կարօտութեան և անհրաժեշտ պահանջմանց համաձայն կարևոր և օգտաւէտ առարկաներով և բարեկարգութեամբք յարատև զարգացնել՝ ոտնակոխ անելով այն ամեն խոչընդոտները, որպիսիք ամեն ժամանակ այսպիսի վսեմ ձեռնարկութեանց դէմ ընդ առաջ կըպատահին, սակայն խոհեմ և հեռատես ընթացքները կարեն զայնպիսիս խոնարհեցնել իւրեանց բաղձանաց առջև։

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՑՍ.

(Շարունակութիւն)

[illegible]

| | ռ. | կ. |
|---|---|---|
| Հասարակութիւն Հատրութ գեղջ | 100 | |
| Հատրութեցի Տիրացու Յարութիւն Տէր Յօհաննէսեան | 8 | |
| Հասարակութիւն Վանք գեղջ | 10 | |
| Հասարակութիւն Ջամձոր գեղջ | 20 | |
| Հասարակութիւն Շաղախ գեղջ | 14 | |
| Հասարակութիւն Ջիլան գեղջ | 10 | |
| Հասարակութիւն Բնիաթռու գեղջ | 7 | |
| Հասարակութիւն Միլքատարեայ գեղջ | 7 | |
| Առաքիլեցի Գիւլուշան Սէյրանեան | 2 | |
| Առաքիլեցի Յովսէփ Պետրոսեան | 2 | |
| Առաքիլեցի Ղահրաման Ղազարեան | 1 | |
| Առաքիլեցի Օհան Գրիգորեան | 1 | |
| Հասարակութիւն (մնացեալ) Առաքել գեղջ | 15 | |
| Հասարակութիւն Բանազուր գեղջ | 50 | |
| Հասարակութիւն Քարագլուխ գեղջ | 6 | |
| Հասարակութիւն Ձոր գեղջ | 25 | |
| Հասարակութիւն Դօլանլար գեղջ | 10 | |
| Հասարակութիւն Թաղասեռ գեղջ | 25 | |
| Հասարակութիւն Որդնաշատ գեղջ | 10 | |
| Հասարակութիւն Տաք գեղջ | 10 | |
| Հասարակութիւն Ղուշչիլար գեղջ | 3 | |